ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ, ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

02.12.2016թ. ք. Վանաձոր

ՀՀ Լոռու մարզպետարանը ի դեմս մարզպետ Արթուր Նալբանդյանի, ով գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա մի կողմից, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (այսուհետ՝ ՀԿԽԸ) ի դեմս ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա և Շվեյցարական Կարմիր Խաչը (այսուհետ ՇԿԽ) ի դեմս Միջազգային համագործակցության Ասիա և Եվրոպա բաժնի ղեկավար Յուրգ Ֆրեյը, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա մյուս կողմից, կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

1. Հուշագրի առարկան և ընդհանուր դրույթները.

1.1 ՀՀ Լոռու մարզպետարանը, որը մարզում իրականացնում է պետական կառավարում, իրագործում է Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականությունը, համակարգում է հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը, Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը, որն հանդիսանում է կառավարության օժանդակ կառույց մարդասիրական ոլորտում և Շվեյցարական Կարմիր Խաչը, որպես ՀԿԽԸ համագործակից կազմակերպություն, իրենց պատրաստակամությունն են հայտնում համագործակցել «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն ուղղված է տարեցների, հաշմանդամություն կամ քրոնիկ հիվանդություն ունեցող անձանց համար սոցիալ- առողջապահական տնային խնամքի մոդելի ներդրմանը, ինչպես նաև համայնքներում ակտիվ ծերացման ջատագովմանը, վերը նշված անձանց համայնքի կյանքում ներգրավմանը, նրանց հմտություններն ու հնարավորությունները ի բարօրություն համայնքի օգտագործմանը:

1.2 Կողմերը՝ գործելով համաձայն << սահմանադրության, գործող օրենքների և իրենց կանոնադրություններով վերապահված լիազորությունների շրջանակներում, համագործակցության առաջնահերթ խնդիր են համարում փոխադարձ համաձայնության և վստահության վրա հիմնված համատեղ աշխատանքը:

2. Կողմերի պարտավորությունները

2.1 Կողմերը պատրաստակամ են ներդնել իրենց փորձագիտական գիտելիքներն ու կարողությունները ինտեգրացված սոցիալ-առողջապահական տնային խնամքի մոդելի արդյունավետ ներդրման, մոդելի, ինչպես նաև համայքներում ակտիվ ծերացման գաղափարի մարզային մակարդակում ջատագովման նպատակով:

2.2 Կողմերը պատրաստակամ են իրենց իրավասության շրջանակներում փոխանակել առողջ ծերացմանն ու տարեցների տնային խնամքին առնչվող աշխատանքներում ձեռք բերված փորձառությունն ու քաղած դասերը՝ ներկայացնել առաջարկություններ միմյանց:

2.3 Կողմերը պատարաստակամ են ներկայացնել առաջարկություններ իրազեկմանն ու գիտելիքների բարձրացմանն ուղղված միջոցառումներին մասնակցության նպատակով, ինչպես նաև իրենց իրավասության շրջանակներում համատեղ իրականացնել հանրային միջոցառումներ:

3. Գործողության ժամկետը

3.1 Սույն հուշագիրը գործում է ստորագրման պահից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

4. Եզրափակիչ դրույթներ

4.1 Կողմերը պատասխանատու են հուշագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների պատշաճ իրականացման համար:

4.2 Հուշագրի փոփոխումը, լրացումը կամ դրա դադարեցումն իրականացվում են կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

4.3 Պայմանագրի գործողության ընթացքում Կողմերի կողմից մշակված և հաստատված համատեղ փաստաթղթերը, որոնք նպատակաուղղված են հուշագրի շրջանակներում իրականացվող համատեղ գործունեության իրականցմանը, դրանց հաստատման պահից համարվում են սույն պայմանգրի անբաժանելի մասը:

4.4 Կողմերը, գիտակցելով իրենց առաքելությունը և պատասխանատվությունը սույն հուշագրի 1.1 կետում նշված համագործակցության կարևորությունն ու նշանակությունը, պայմանավորվում են իրենց ջանքներն ուղղել սույն հուշագրով նախատեսված աշխատանքների շարունակականության և տևականության ապահովմանը:

4.5 Սույն պայմանագիրը կազմված է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

4.6 Հուշագիրը ստորագրված է 2016 թվականի դեկտեմբերի 2-ին:

Ի դեմս ՀՀ Լոռու մարզպետարանի	Ի դեմս Հայկական Կարմիր խաչի ընկերության	Ի դեմս Շվեյցարական Կարմիր Խաչի
Մարզպետ Արթուր Նալբանդյան	Նախագահ Մխիթար Մնացականյան	Միջազգային համագործակցության Ասիա և Եվրոպա բաժնի ղեկավար Յուրգ Ֆրեյ